ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"21" 12 2012թ. № 187 Ա

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՈԼՈՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2013Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԿԱ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ԵՎ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՄԱՏԵՂ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով և համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2012թ-ի դեկտեմբերի 11-ի N 01/15/6523-12 հանձնարարականի, **որոշում եմ՝**

1. Հաստատել՝ Սյունիքի մարզի բոլոր տնտեսություններում և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններում 2013թ. հունվարի 1-ի դրությամբ առկա անասունների համատարած հաշվառման աշխատանքները կազմակերպող և անցկացնող համատեղ հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին՝ ապահովել անասունների համատարած հաշվառման աշխատանքների՝ սահմանված ժամկետներում իրականացումը և տեղեկատվության ներկայացումը:
3. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ. դեկտեմբերի 21

ք. Կապան

Հ ա վ ե լ վ ա ծ

ՀՀ Սյունիքի մարզպետի

2012թ. դեկտեմբերի 21-ի

N 187-Ա որոշման

Կ Ա Զ Մ

ՀՀ Սյունիքի մարզի բոլոր տնտեսություններում և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններում 2013թ. հունվարի 1-ի դրությամբ առկա անասունների համատարած հաշվառման աշխատանքները կազմակերպող և անցկացնող համատեղ մարզային հանձնաժողովի

Վլադիմիր Գրիգորյան	-	ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության Սյունիքի մարզային գործակալության պետ / հանձնաժողովի նախագահ, համաձայնությամբ/
Սամվել Թանգյան	-	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ /հանձնաժողովի անդամ/
Ամալյա Բաբաջանյան	-	ՀՀ ԱՎԾ Սյունիքի մարզային գործակալության Կապանի տարածաշրջանի վիճակագրական բաժնի պետ / / համաձայնութամբ/
Դոնարա Հակոբջանյան	-	ՀՀ ԱՎԾ Սյունիքի մարզային գործակալության Գորիսի տարածաշրջանի տարածքային վիճակագրական բաժնի գլխավոր մասնագետ /համաձայնութամբ/
Կորյուն Համամճյան	-	ՀՀ ԱՎԾ Սյունիքի մարզային գործակալության Սիսիանի տարածաշրջանի տարածքային վիճակագրական բաժնի գլխավոր մասնագետ /համաձայնութամբ/
Սվետլանա Թարվերդյան	-	ՀՀ ԱՎԾ Սյունիքի մարզային գործակալության Մեղրիի տարածաշրջանի տարածքային վիճակագրական բաժնի գլխավոր մասնագետ /համաձայնութամբ/
Էդգար Թոխսանց	-	ՀՀ ԳՆ <Հանրապետական սննդամթերքի անվտանգության Անասնաբուժասանիտարիական և բուսասանիտարական լաբորատոր ծառայության կենտրոն ՊՈԱԿ-ի ՀՀ Սյունիքի մարզային տարածաշրջանի պետ /հանձնաժողովի անդամ, համաձայնությամբ /
Կամո Սարգսյանին	-	<<Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն>> ՊՈԱԿ տնօրեն /համաձայնությամբ/

Արմիկ Բակունց	-	Գյուղատնտեսական աջակցության մարզային կենտրոնի տնօրեն /համաձայնությամբ/
Գայանե Դավթյան	-	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ /անդամ/
Շադունց Ներսես	-	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ /անդամ/
Կարեն Փարսադանյան	-	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ /անդամ/
Մարգարիտ Զախարյան	-	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի առաջատար մասնագետ /անդամ/

Աշխատակազմի ղեկավար Ռ.Ղազարյան